


2
ARCHAG ALI
P. O. Box
CAIRO
U

ԱՐԿԱՅԻԱՆ

Կ Ա Ս Մ

ԱՆՆԱՌԱԿ ԿՆԿԱՆ ՄԸ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐԿՍԿԵՐՆԻ ԿՆՅՆՆՈՒՄ

Handwritten signature



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՐԲՆԵԱՆ

— 1864 —

ARCHAG ALI
P. O. Box 3
CAIRO,
U.

LBOYADJIAN
38 (Faggala)
EGYPT.
A. R.



ՀԷՆՐԻԱԴԴԱ

ԿԱՄ

1720

ՆԱՌԱԿ ԿՆԿԱՆ ՄԸ ԿԵԱՆՔԸ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ



Գիտանք
Ալպոյանեանք
— Մաթարիա
Արեակ
Գանիրէ

Կ-ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

— 1864 —



Հ. Բ. Բ. Բ. Բ.

ԿԻՄ

ԱՆՆԱԿԱՆ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ


ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1884



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Մեր ազգի երիտասարդութեան աչաց առջևն հաստ և անթափանցիկ վարագոյր մը կայ, որոյ ետեւը թշուառութեան և մահուան ամեն տեսարանները շքեղութեամբ կը կատարուին:

Ընկերական ընթացքին առջև եկած ամեն պատանի և երիտասարդ կատարեալ տգիտութեամբ դէպ'ի այս վարագոյրը կը դիմեն որն որ երբեմն երբեմն բացուելով, եթերական էակներու, հեշտութեան չաստուածահիներու և անմահ յաւերժահարսանց փառաւորութիւնները նոցա աչաց կը ներկայացուի, շքեղ և գեղանի աղջիկներ բեհեզներով զարդարեալ հանդիսական երիտասարդաց կը մօտենան, նոցա սրտտերուն դրդրումները կը կրկնեն և յալիշտակիչ նայուածքներով նոցա սէրն ու համակրութիւնը կը դրաւեն:

Պատանիք և երիտասարդք ապշած, հիացած ինչ ընելին կորսնցնելով, երկրպագութիւն կընեն այն դիցուհիներուն նոցա կարեկցութիւնը հայցելով. դիցուհիք չեն դիմանար խեղճ երիտասարդութեան աղերսանացը, կը բռնեն նոցա ձեռքէն, կը դրկեն կը դգուեն զանոնք և նո-

ցա ծարաւն յագեցնելու կսկըսին . խեղճ երկ-
տասարդութիւնն . . .

Ահա այսպէս մարդկային ընկերութեան
թունալից և դժոխային անդամները ամեն օր ,
ամեն ժամ և ամեն վայրկեան թունաւորելու
և ժանտախտահար ընելու զքաղած են մարդ-
կութեան գեղեցիկ և առոյգ յոյսերը , մինչդեռ
ասդին ծեր փորձառութիւնը պասպանձած կե-
ցած է և ամենևին չիմացներ երիտասարդու-
թեան թէ հրեշտակ տեսածնին՝ հրէշներ , և
դիցուհի կարծածնին ճիւղներ են , որոնք ար-
հեստի միջոցաւ յաւերժահարսանց կերպարան-
քով կը խաբեն զիրենք՝ մինչև որ իրենց խմցնեն
այն մահառիթ թոյնը որ մարդկային կենդանա-
կանութիւնը կսպաննէ և աշխարհս ողջ մեռել-
ներով կը լեցունէ .

Հայ երիտասարդութեան արդի կացութիւ-
նը մեր աչաց առջև այսօր այնպիսի յուսահա-
տական տեսարան մը կը ներկայացնէ որ կը պար-
տաւորիմք լիովին և կատարեալ նկարագրել ի-
րենց , անառակ կանանց վատթարութիւնը , ան-
զգայութիւնը և թշուառութիւնը , յուսալով
որ երիտասարդք յիշեալ կանանց արժէքին և
անոնցմէ ծագած անկրելի թշուառութիւննե-
րուն վերայ տեղեկութիւն ստանալով , գոնէ
ասկից վերջը չի պիտի խաբուին անոնցմէ , և
հեշտութեան ճաշակը առնելու համար չի պի-

տի դիմեն կեղծ և թունալից գեղեցկութեանց ։

Այս նպատակիս հասնելու համար այս անգամ ձեռք կը զարնեմք այնպիսի պատմութիւն մը ներկայացնելու մեր ընթերցողաց , որ արդէն Եւրոպական շատ լեզուներու թարգմանուած և մեծ ազդեցութիւններ ըրած է , միայն թէ յիշել հոս կարևոր է որ մենք այս պատմութիւնը չէ թէ միայն ազատ թարգմանեցինք , այլ կարելի եղածին չափ ալ մեր արդի ընկերականութեան չի վերաբերեալ մասերը պակասեցնելով համառօտեցինք , որպէս զի ձանձրութիւն չի պատճառէ ընթերցողաց ։

Կը յուսանք որ մեր այս աշխատասիրութիւնն ալ ասկից առաջ հրատարակածներնուս ընդունելութեանը կարժանանայ 'ի քաջալերութիւն մեզ և յօգուտ Հայ երիտասարդութեան ։

Սրժան է հոս համառօտ տեղեկութիւն մը տալ Լաւրէնս Սթերնի վերայ , որ մեր հրատարակելիք վէպին հեղինակն է ։

1713 նոյեմբերի 24 երրորդ զիշերը , հարաւային Իրլանտայի Գլօնմէլ քաղաքին մէջ Լաւրէնս Սթերնի ծնունդ տուաւ ։

Լաւրէնսի պատանեկութիւնը մեծ յոյս կուտար իւր բարեկամներուն , և ամեն իւր ծանօթները համոզուած էին թէ՛ նա սահմանեալ է մեծ մարդ մը լինելու ։

1732 ին Գէմպրիձի համալսարանը խրկուե-

ցաւ, ուր 1740 ին վարժապետութեան տիտղոսն ստացաւ :

Լաւրէնս իւր բոլոր կեանքը գրականութեամբ անցուց և թէև շատ անգամ իւր գրութեան ծառայելու համար իւր ժամանակի կղերէն բանադրուեցաւ, անիծուեցաւ և դատապարտուեցաւ, սակայն նա աւելի ուզելով մարդկութեան ծառայել քան թէ մարդոց, իւր գրութեանց ընթացքը ամենևին չի փոխեց և ոչ ալ իւր հոգւոյն ազնուութիւնը կորսնցուց :

Լաւրէնս փափուկ սիրտ մը ունենալով, մարդկային ազգին ենթակայ եղած ամեն թշուառութեանց վերայ կարտասուէր, անտարբեր էր՝ բայց միայն կրօնաւորաց վերայ, որոնք իրեն անհաշտ թշնամիներն էին միշտ :

Լաւրէնս թէև բաւական շահ ունէր, սակայն մեռնելէն վերջը պարտք և համբաւ թողուց :

Ս.հա այս երևելի հեղինակին գործերէն մին է հեռեեալ սրտաշարժ և ճշմարտայից վիպասանութիւնը, որով խիստ լաւ հմտութիւն կարելի է ստանալ մարդկային զանազան թշուառութեանց պատճառներուն՝ և նոյն պատճառները արգասաւորող սովորութեանց վերայ :

Լաւրէնս մեռաւ 55 տարեկան հասակին մէջ :



ՀԷՆՐԻԱԴԴԱ

ԿԱՄ

ԱՆԱՌՈՒԿ ԿՆԿԱՆ ՄԸ ԿԵԱՆՔԸ



ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

ԿԱՐԼՈՅԻ ՄԱՀԸ

Ժամանակաւ Սթէրն երևելի գրագէտը իշու մը մահուան նկարագրութեամբը շատերը արտասուեաց շարժեց, նորա նման ես ալ թէև իշու մը պատմութիւնը պիտի ընեմ, սակայն միակերպութեան մէջ չի պիտի կաշկանդուիմ, վասն զի արդի ժամանակս այն տեսակ նկարագրութիւններէ կը խորշի, և կը փնտրուէ այնպիսի իրողութիւններ՝ որոնք տոսկում, մթութիւն և արիւնհեղութեան տեսարաններ կը ներկայացընեն. խրախոյս առնենք ուրեմն հասարակութեան այս տենջանքէն և հրատարակեմք այնպիսի պատմութիւն մը, որ մարդկային ամբողջ ազգը ՚ի գութ շարժէ այն սեռին վերայ, որն որ այսօր մեր հեշտութեանը միմիայն կը ծառայէ:

Փարիզի մէջ Պրիէ Կլոտի անուամբ մեծ տաւ և ահուելի շէնք մը կայ կատաղի շուներով լեցուն. ասի գազանական թէաթրօ մի է ուր

ալ բանի մը պիտանի չեղող ձիերն ու էշերն իրենց վերջին շունչը փչելու կը տարուին • Օր մը դիպուածը այնպէս բերաւ որ պարտաւորեցայ յիշեալ թատրոնը մտնել և հանդիսատես լինիլ եռօտանի իշու մը մահուանը • թատրոնին մէջ բաց 'ի ինձմէ ուրիշ մարդ չի կար, գացի պահապանին կամ ներկայացման տնօրէնին, որոյ կերպարանքը արգարեւ շատ յարմար էր իւր պաշտօնին •

Նորմաի կամ Թրովաթօրէի հանդիսակաւնի մը նման նստած էի ինձ տրուած տեղ մը, երբ դուռ մը բացուելով խեղճ էշ մը ներս մտաւ որ երեք օտքի վրայ կանգնած էր եւ շատ դժուարութիւն կը քաշէր յառաջ գալու համար • յիշաւի ասիկայ խիստ ողբալի տեսարան մի էր • խեղճ կենդանին նախ իւր հաւասարակշռութիւնը գտնելու աշխատեցաւ, յետոյ կամաց կամաց բակին մէջ տեղը գալով կանգնեցաւ, գլուխը առջին կախեց, եւ ինքզինքը թողուց որ եւ իցէ բաղդի մը գալստեան • այս միջոցիս չորս սանձարձակ կատաղի շուներ ներս նետուելով թշուառ իշուն վրայ յարձակեցան • ասոնց դէմ դնել անհնար էր եւ էշը մեռնելէն 'ի դատ բան մը չէր կարող ընել, ինչպէս որ ալ ըրաւ նոցա ակուաներուն տակ ջարդուելով • վասն զի նա անմենեւին չի շարժեցաւ որպէս զի չիցայ • եւ թէ եւ Մարկիւս Օրիլիսի նման որոշեր էր մեռնիլ,

սակայն արցունքներն աչքերէն վար կը գլտորէին եւ տխուր հառաչանք մը սրտէն կելլէր .

Առանձին էի այս միջոցիս , բայց առանձնութիւնս խիստ զարհուրեցի եկաւ ինձ երբ էշըն լաւ մը նկատելով գտայ որ նա իմ հին բարեկամն էր Այո՛ , Կարլօթն էր նա երկայն գլխով , հանդարտ դէմքով եւ մոխրագոյն մորթով . խեղճ արարած .

Կարլօթն ճանչնալս զիս կենացս անցեալ շարժաններուն խրկեց եւ դժնդակ պատմութեան մը վիշտը կուրծքիս մէջ նորոգեց , ուստի դուրս ելայ թատրոնէն միտքս դնելով ամբողջ մարդկութեան նկարագրել այնպիսի պատմութիւն մը , որ որքան որ սրտաշարժ , նոյնքան ալ իրական է . ուրեմն մոռնանք Կարլօթը և մեր պատմութեան բուն գիւցազնուհին ներկայացընենք ընթերցողաց .



Գ Լ ՈՒ Խ Բ .

ՊՕՆ ԼԱՓԷՆԻ ՊԱՆԴՈԿԸ

Քանի մը տարի առաջ , Փարիզի մօտերը Վանվէս անուն զիւղը երթալու ժամանակս իշու մը վերայ հեծած աղջիկ մը տեսայ , որն որ իւր տակի պինտ գլուխ իշուն վազելն արգիլելու անկարող կացութեան մը մէջ կը գանուէր .

այս աղջկան գեղեցկութիւնը անանկ յափշտակեց զիս որ ապշեցայ մնացի, բայց երբ զինքն իշէն իյնալու վտանգին մէջ տեսայ ամեն ջանքըս 'ի գործ դրի որ էշը կանգնեցունեմ, բայց 'ի զուր ելան թէ իմ ջանքերս և թէ վարդագոյն և նազելի օրիորդին կանչուրուտելները :

Էշը կը վազէր, գեղանի հեծնողն կաղաղակէր, ես և շնիկս իշուն ընթացքը կտրելու կաշխատէինք, մինչև որ էշն յանկարծ կանգնելով Վանվէսի օրիորդը վրայէն նետեց ճիշդ այն վարկենին՝ երբ ես հասնելով աղջկը բաղկացս մէջ առի . . . վարկեան մը նա իմն եղաւ :

Սյապիսի պարագայի մը մէջ բնականօրէն շնորհակալութեան նշան մը կը յուսայի օրիորդէն, բայց որքան ցաւեցայ երբ նա ինքզինքը ինձմէ հեռացնելով զնաց, և իշուն գլուխը իւր այտերուն դպցունելով գգուեց զանի և համբուրեց և յետոյ թռչունի մը նման վրան ցատկելով իւր ճամբան շարունակեց երեսս անգամ չի նայելով :

Աներևութացաւ աչքէս Հէնրիադգան՝ բայց ոչ սրտէս, նա կուրծքիս մէջ այնպիսի նկար մը թողուց որ անհնար էր ինձ մոռնալ, կարծը ըսեմ սիրահարուեցայ ես այս գեղացի աղջկան որ որքան որ անկիրթ, նոյնքան ալ գեղանի էր և քնքուշ . բնական գեղեցկութիւն մի ունէր նա 'ի նախատինս քաղաքացի, և կրթեալ օրիորդաց :

որոնք այնքան սգեղ են, որքան որ գիշերները գեղեցիկ կերևնան իւրեանց հազարաւոր ծիծաղական և ոչ վեհանձնական հանդերձանքներովն, զարդարանքներովն, ներկերով և անուշահոտ բուրմուռնքներովն: Քանզի երիտասարդները այս վերջիններուն խաբեբայ գեղեցկութիւններէն յափշտակեալ ինքզինքնին այնպիսի բազկաց մէջ կը նետեն՝ ուր փոխանակ մեղմ և բնական գգուանաց, կը սեղմուին, կը ճրմլուին և կը մեռնին:

Քանի մը վայրկեան ծառի մը տակ կանգնելէս յետոյ սկրսայ ճամբաս շարունակել խորհելով՝ որ հարկաւ պիտի կարենամ կրկին անգամ տեսնել Հէնրիադդան, մինչև որ գիւղը հասնելով ուղղակի Պն Լաֆէնէ պանդոկը գացի:

Այս պանդոկը Վանվէսի լեռան ստորտը շինուած է պարտիզի մը, բակի մը և աղօրիկի մը մէջ տեղը, բակը շքատու ծառերով լեցուն է, որոնց տակը ամառ ժամանակ ամեն տեսակ անձինք կերթան հանգչելու, կերակուր ուտելու և կամ զուարճանալու համար. մանաւանդ Փարիզի տիկիները հոս շատ կը յաճախեն. իսկ պարտեզը այնպիսի գիրք մը ունի, ուր սիրոյ խաղալեքները շատ երջանիկ ժամանակ կըրնան անցընել. և ուր շարունակ կը գտնուին երիտասարդք և օրիորդք, չափահաս մարդիկ և կիներ, ծեր մը տասն և ութը տարեկան աղջ-

կան մը հետ և այն • Արդարև այս պարտեզը մտնողը կը պարտաւորի աղջկանց առատութեան վերայ զարմանալ որոնք նապաստակի երամոց նման հոս կը վիտան •

Պանդոկը հասնելուս պէս գացի պարտեզին մէկ անկիւնը նստեցայ առանց ընկերի մը , և սկըսայ նկատել հոն գտնուող բազմութիւնը • իրենց մէջ սէր ամենեւին չի կրցի նշմարել , վասն զի ամենքն ալ յայտնի կընէին թէ մոլութիւնն էր առաջնորդնին •

Հոն գտնուող բազմութեան վերայ զբաղած միտքս՝ առանց իմ իմանալուս սկըսած էր խորհիլ Հէնրիադդայի և իւր իշուն (Կարլօթին) վերայ , և սիրտս սկըսած էր լեցուիլ այն աննկարագրելի տենջանքով , որ միայն իրենց սիրոյ առարկան որոնող սրտերն կրնան զգալ , մինչև որ ալ զուարճութիւն մը չզգալով պարտեզէն , սկըսայ տանս ճամբան բռնել • սրտիս թախծութենէն եւ ոչ մէկ առարկայի մը վրայ նայելով . . . ա՛հ շատ գեղեցիկ աղջիկներ տեսած էի , սակայն Հէնրիադդայի նման չէի տեսած •



Թէև քսան տարեկան անմեղ և զուարճաւոր երիտասարդ մըն էի, բայց Հենրիադդան տեսած օրէս վերջը ամեն տեսակ զբօսանք, խաղեր և տեսարաններ ինձ համար տհաճելի էին. իմ միմիայն տենչանքս Հենրիադդան և Կարլօթը տեսնել էր, բոլոր խորհուրդներս, երևակայութիւններս և երազներս միմիայն անոնց վերայ կորոճային. և անոնցմէ դուրս ամենևին խորհելու առարկայ մը չէի ուզեր, չէի կրնար ունենալ.

Խիստ դժբաղդ իրողութիւն մի է որ երիտասարդք արդասիքներու վերայ կատարեալ տեսութիւն չեն կարող ունենալ. հոգին եւ սիրտը ուղիղ ընթացքի մը մէջ դնելու համար՝ ժամանակ, կրթութիւն և քննութիւն կարևոր են. ես որ երիտասարդ մըն էի, և շատ կը սիրէի Փօնթէնէլի և Սէկրէսի գրուածքները կարգալ՝ մեծ նեղութիւններ անցնելով արդի բանաստեղծական կատարելութեան հասայ, և կափսոսամ հիմայ այն կորուսած ժամանակներուս վերայ երբ հովիւներու և հովուուհիներու նկարագրութիւններովը կը զուարճանայի և իմ դատողութիւնս բոլորովին կեղծ էր

Ամեն բանէ առաջ ճշմարտութիւն կարևոր է

Մի՛ զատուիր ճշմարտութենէ, թէև նորա պատճառաւ կեանքէդ զատուել պարտաւորիս :

Եւ յիրաւի ի՞նչ է հովիւ մը . եթէ ոչ քանի մը ոչխար արածելու համար օրը քանի մը դահեկան առնող, հին ու մին լաթեր հագնող և անօթութենէ մեռնող թշուառ մը . ի՞նչ է հովուուհին սոխ ու խստոր հոտող, իւղոտ գլխով կարմիր ձեռուըներով և դէմքով ծանր կտոր մը տձև միս . բարեբաղդ լինելու համար գործել զիտնալու է, ձեռք սեղմել մը, ժամանակին և տեղին յարմար հայեցուածք մը և վարպետ հառաչանք մը սիրոյ գաղանխքներն են . առաջին անգամ Մօրկի մէջ բնութեան ձեռքը թօթուեցի և ինչպէս որ բնական է դուշակել, շատ ժամանակ կորուսի նորա բարեկամն լինելու համար . վերջապէս երբ պարզութիւնս մէկդի դրի, բնութիւնը խիստ տարբեր տեսայ . եւ երբ խոշորացոյցով զայն զննեցի, ամեն սոսկալի իրողութեանց նկարները ինձ ներկայացան :

Առաւօտուն երբ կանուխ արթննալով սենեկիս պատուհանէն բնութեան առաջին շարժումները կը նշմարէի, ամեն բան անմեղ կը տեսնէի, բայց երբ իմ բնակարանիս դիմացի տան պատուհաններն կէս մը ծածկած վարա-

գոյրներուն ետեւն նայելով խորունկ քունի մը մէջ ինկած դքսուհին կը տեսնէի, և նորա նոյն տան վերի յարկը բնակող հայրն անյայտ աղջիկն կը դիտէի, և երբ գիշերային զեղևուլթիւններէն իւր տունն դարձող դեռահաս կիներն կը տեսնէի, վայրկեան մը առաջ տեսած անմեղուլթիւնս կը փոխէր իւր կերպարանքը :

Տեսած դքսուհիս մինչդեռ դեղնագոյն անկողնոյ մէջ կը ննջէր. հայրն անյայտ աղջիկը արտուտի նման արթննալով առանց հանդերձներն հագնելու նախ հայելին առջեւ երթալով կսկըսէր իւր մազերն եւ դէմքը կարգադրել եւ գոհ լինելով իւր գեղեցկուլթեանը վերայ՝ կը ժպտէր միանգամ ու իր պարտաւորուլթեանց կերթար :


Կը տեսնէի նաեւ ծերունի անցնորդներ, որ դեռ հառաչելով կը նայէին քովերնուն անցնող աղջկանց վերայ. անմեղուլթիւն, ո՛ւր պարտինք փնտրուել զանի, ո՛ւր կը գտնուի ան :

Տեսնելով որ իմ բնակարանս շրջապատող ամեն տեսարաններուն մէջ անմեղուլթիւն չի կայ, սկըսայ ամեն առաւօտ դատաստանատուն երթալ խորհրդածուլթեան նոր առարկայներ գրանելու համար :

Փաստաբան մը վեր կելլէր սանդուղիներէն եւ փաստաբան մը վար կիջնար. անմօրուք ճարտասաններ՝ որ որքան որ գործ մը չեն տեսներ,

նոյնքան ալ գործունեայ կերեւան մէյ մը հոս
 մէյ մը հոն վազելով . դատաւորներ՝ որ զանա-
 զան սենեակներու մէջ ՚ի զուր ժամանակ կը
 վատնեն . պաշտօնեայներ՝ որ կրցածնուն չափ
 կը կանչուըւտեն , եւ բանտեր՝ որ անթիւ բան-
 տարկեալներ կը պարունակեն . խեղճ արարած-
 ներ , որ իրենց կեանքը կամ ազատութիւ-
 նը դէմերնին ելած փաստաբանէն կը խընդ-
 րեն . յանցաւորներու հետ քանի անմեղներ այս
 բանտերուն մէջ բանտարկուած են . քանի քանի
 ընտանեաց եւ զաւակներու տէր անձինք՝ կտոր
 մը հացի համար ըրած պարտքերնուն պատճա-
 ռաւ հոս իրենց ժամանակը կը կորսնցընեն . . .
 բնութիւնը որքան կերպարանափոխ եղած է .
 շնորհակալութիւն արդարութեան պաշտպան-
 ներուն . ճշմարտութիւնը սոսկալի բան մի է
 եւ արդարեւ ես ամեն բան եղծուած դտայնոյն
 իսկ հրապուրիչ գեղեցկութիւններն եւ որոն-
 ուած երջանկութեան հեշտարար աղբիւրները .
 անանկ որ ալ չէի կրնար հաւատալ թէ աշխար-
 հիս մէջ իրական ճշմարտութիւն եւ գեղեցկու-
 թիւն կայ . Գիշերը վրայ կը հասնի , եւ ահա
 զազրագործութիւնները կը թագաւորեն . կին
 մը իւր աղջիկը կը ծախէ . հազարաւոր տունե-
 րու մէջ շնացողներ եւ խաղամոլներ զբաղեալ
 են . մարդ մը իւր գաղտնի սենեակին մէջ կեղծ
 դրամ շինելու ետեւէ է . կին մը իւր երիկը կըս-

պաննէ . զաւակ մը իւր հայրը կը կողոպտէ և երիտասարդ մ'ալ ինքզինքը գետը կը նետէ , աշխարհէս փախչելու տենջանքով . ամեն երեւոյթ կեղծ է մարդկային ընկերութեան մէջ :




Գ Լ Ո Ւ Խ Դ .

ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ ՏԱԼ

Կենացս նոր ընթացքին մէջ մէկը կը փընտըռէի՝ և ան էր Վանվէսի աղջիկը , որն որ մէկ առաւօտ մը աղբիւրի մը քով կանգնած տեսայ՝ որ ջուրին ընթացքը կը դիտէր . ինքն ալ խոտէ գլխարկ չէր հագած և ոչ ալ երեսին գոյնը տեղը մնացած էր . բազուկներն իրենց կենդանութիւնը կորսնցուցած էին , բայց ինքն նոյն իսկ Վանվէսի մէջ տեսած աղջիկս էր . քաղաքային կեանքը մեծ փոփոխութիւններ ըրած էր նորա վերայ , ինքն հիմայ աղտոտ ձեռնոցներ , հին կօշիկներ , նոր գլխարկ մը և նեղ ու կարճ շքազգեստ մը հագած էր . նորա քալուածքը արհեստական էր և թէև անանկ կերեւար որ աճապարանքով տեղ մը կերթայ , բայց իւր հետաքրքրութիւնը յագեցնելու համար տեղ տեղ կայնելու կստիպուէր . իւր բոլոր կերպարանքը կը յայտնէր թէ ինքն ալ յաւիտենական որս մը եղած էր մոլութեան . Ուր որ դնաց հետեւեցայ իրեն .

466
994



երբեմն շտապաւ կերթար, երբեմն կանկ կառնուր, մէյ մը մէկուն մէյ մը մէկալին կը նայէր, իւր դէմքին վերայ զարմացման և ոչ ալ ամօթխածութեան նշան մը կը տեսնուէր :

Հէնրիադդան և ես շարունակեցինք մեր ճամբան մինչեւ որ ՄՕՐԿ հասանք : Մօրկը հիւանդանոցի մը դիմացը շինուած քառակուսի փոքրիկ շէնք մըն է, որոյ տակէն սեաւ և աղտոտ ջուր մը կանցնի : ամեն մարդ ազատ է հոն մտնելու կենդանի կամ մեռեալ, գիշեր ժամանակ կամ ցերեկ՝ դուռը միշտ բաց է : այս շէնքին պատերը խոնաւ են, որոնց մէջ հինգ կամ վեց հատ քարաշէն տախտակներ կան վրանին մերկ դիակներ շարուած :

Այսօր երեք հատ դիակներ կային հոս, մէկը ծերունի մը որ տան մը պատուհանէն իյնալով մեռած էր, որոյ ունեցած երեք զաւակներն անկարող էին իրենց հօրը թաղման ծախքն ընել : երկրորդը դպրոցի տղայ մըն էր՝ որ դուքսի մը կառքին անիւներուն տակ ճզմուած էր : և երրորդը՝ որ գեղեցիկ երիտասարդ մըն էր՝ Հէնրիադդայի ուշադրութիւնը գրաւեց, և որոյ քով կանգնելով նա՝ կամաց մը ըսաւ « այս է . . . » խեղճ երիտասարդ, ինքզինքը Հէնրիադդայի համար սպաննած էր :

Այս երիտասարդը Հէնրիադդայի առաջին գոհն եղած էր, Հէնրիադդայի՝ որ նորա ան-

չարժ դիակին քով անտարբեր և անզգայ կանգնած էր . գրեթէ ամեն կին զինքն աւելի սիրող մը կը խաբէ անգթաբար և ապերջանիկ կընէ . Հէնրիադդա ամենևին սիրտ մը չունէր . անզգայ էր նա , վասն զի թէ որ սիրտ ունենար և ըզգացում՝ իւր սիրովն կիզեալ այն խղճալի երիտասարդին վերայ կարեկցութիւն կունենար , որն որ իւր սիրոյն համար տուն , հարստութիւն , գերդաստան և Անդղիոյ Լօրտերու տան մէջ ունեցած աստիճանը թողած՝ և հիմայ ալ մեռած էր այլ եւս չի տեսնելու՝ զինքը չի սիրող , իւր սէրն չի յարգող և չի փոխարինող Հէնրիադդան :

Մինչդեռ Հէնրիադդան կը պատրաստուէր երթալու , երկու երիտասարդներ ներս մտան , որոնցմէ մին վերոյիշեալ Հէնրիադդային համար մեռնող երիտասարդին ծառան էր՝ որն որ տեսնելով իւր տիրոջը դիակը մօտեցաւ նորա և տխուր թախծութեան մը մէջ ընկղմեցաւ :

Այս միջոցիս մէկը մօտենալով՝ իւր տիրոջը վերայ արտասուող երիտասարդին ըսաւ . « կը փափաքիս որ տէրդ ողջնայ , խնդում իւր շրթանց վերայ , և կրակ իւր աչաց մէջ . եթէ կուզես՝ կրնաս քու տէրդ այս երեկոյ իմ տունս բերել և տեսնել թէ խօսքիս տէրը չե՞մ մի » . այս խօսքերուն վերայ երիտասարդը խնդրեց և ընդունեց նորա տան նշանաթուղթը և խոս-

տացաւ իւր տիրոջը դիակը հոն տանիլ, Հէն-
րիադդան այս խօսքերը լսելով գուրս ելաւ,
երբ ես ալ մօտենալով հրաշագործին՝ արտօնու-
թիւն առի գործողութեան ներկայ գտնուիլ,
և ելայ գուրս, մոռցայ Հէնրիադդան և բոլոր
օրը խորհեցայ տեսնելիքիս վերայ:

Օրն երեկոյ եղաւ և ես գացի մեռեալը ող-
ջնցունողին տունը, ուր վեց եօթը ազնուականի
կերպարանք ունեցողներ զես ընդունեցին. բայց
երկինք, ո՞վ է այս տիկինը որ սօֆաին վերայ
բազմած է... Հէնրիադդան՝ որոյ վերայ նայողը
հարկաւ զայն տան տիկինը պիտի կարծէր:

Մինչդեռ զանազան նիւթոց վերայ կը խօ-
սէինք, յանկարծ սենեակին դուռը բացուելով
Մօրկի երիտասարդը տիրոջը դիակը ուսին վե-
րայ առած ներս մտաւ և տեսնելով որ բան մը
պատրաստուած չէր իւր բեռին համար որ վը-
րան դրուի, տարաւ և Հէնրիադդայի նստած
սօֆաին վերայ նետեց. ճիշդ այն կնկան քով՝
որոյ համար մեռած էր նա:

Սեղան մը պատրաստուելով դիակը վրան դրու-
ուեցաւ և գործողութիւնն սկսաւ. շատ չե
տեւեց և ահա դիակը սկսաւ շարժիլ, ահռա-
ները մեկզմեկու զարկաւ և տխուր հառաչանք
մը արձակեց՝ երբ Հէնրիադդան անտարբեր և
անկարեկից զանի կը դիտէր:

Երիտասարդ ծառան ալ չե կրնալով դիմա-

նալ՝ նետուեցաւ դիակին վերայ և ուզեց գրկել զայն, բայց եղուկ որ իմացաւ խաբէութիւնը. ելաւ ոտքի և խոստանայով որ հետեւեալ օրը դարձեալ պիտի գայ՝ շտապաւ դուրս ելաւ և գնաց. և որոյ հետեւեցայ ես ալ.

Այս ամենը Հէնրիադդայի վերայ տեսնելէս վերջն ալ տակաւին կը փափաքէի գիտնալ նորա շարժառիթները, վարած և վարելիք կեանքը, խեղճ կին. նա ենթակայ եղած էր բոլոր այն պարագայներուն որոնց ամեն տարաբաղդ կանայք կենթակայանան, երբեմն բարձր և երբեմն նուաստ աստիճանի մէջ, այսօր բեհեզներով զարդարեալ վաղը քուրջերով, գլտորիլ մէկ վիհէ ուրիշ վիհ մը, գրկուիլ, սիրուիլ երիտասարդներով, ծերերով, բարեկազմ և առողջ մարդիկներով և ագեղ ու ախտաւոր կուրծքերով. Հէնրիադդան ալ բոլոր այս պարագաներուն ենթակայանալով հիմայ ՊԱՏՈՒԱԻՈՐ ՏԻԿԻՆ մը եղած էր... մոլութեան մէջ անգամ աստիճան մը կայ որ կը յարգուի առաքինութեան չափ. Հէնրիադդան ալ որ հիմայ բարձրաստիճան և համբաւաւոր տարփածուի մը պաշտպանութեանը տակն էր, նորա կամացն համեմատ ստիպուած էր ԳՐՈՒԹԵԱՆ ՔՈՅՐ ձեւանալ, պաշտօն վարել և քիչ մը սուրբ ջուր խառնել իւր անուշահոտ իւղերուն մէջ, և ծնկան վերայ աղօթել եկեղեցեաց մէջ. ասոնցմէ վերջը

նա պատուաւոր և պաշտօնական նիստ մը և արտօնութիւն ունեցաւ, ողորմութիւն խնդրելու 'ի նպաստ աղքատաց և զանազան բարեգործական ընկերութեանց :

Օր մը երբ առանձին էի տանս մէջ, Հէնրիխ ադդան եկաւ և բաժանորդագրութիւն մը առաջարկեց ինձ . նորա անակնկալ դալուստը այնքան շփոթեց զիս որ բոլոր անցեալը մոռցայ և ըսի . « այսպէս իմ սիրելի Հէնրիադդաս վերջապէս զիս տեսնել եկար » :

— Հէնրիադդա . . . սիրելի Հէնրիադդա՞ » ըսաւ նա զարմանալով . « բայց ի՞նչպէս գիտես իմ անունս » :

— Ո՛ւր է Կարլօթը Հէնրիադդա, պատասխանեցի իրեն, ո՛ւր է Կարլօթը :

— Կարլօթը, կրկնեց նա մեծ զարմացմամբ և իբր թէ կաշխատէր բան մը յիշել . . . այս ապերախտութեան և մոռացկոտութեան վերայ սիրտս սաստիկ վշտանալով ըսի :

« Այո՛, խեղճ Կարլօթը, գեղեցիկ Կարլօթը որ այնքան կը սիրէիր և կը գգուէիր . Կարլօթը որոյ վերայ կը հեծնէիր վանվէսի մէջ . Կարլօթը որոյ վերայ հայրդ խոտ կը բեռցընէր . Կարլօթը որ . . . եղո՛ւկ Հէնրիադդա, եթէ գիտնայիր թէ ես ուր տեսայ զանի վերջին անգամ . . . » խօսքս չէի լըմնցած երբ նա գրպանէն թուղթի կտոր մը հանելով ըսաւ . « որբերու պատասպարանի

համար ստորագրութիւն բացած ենք, ինչ կը հաճիս տալ » :

« Ոչինչ կրնամ տալ քեզի տիկին » , ըսի ապշելով :

— Բայց կաղաչեմ տէր, խորհէ՛ որ անպաշտպան տղաքներու համար պիտի տաս, շարունակեց նա, մանաւանդ որ դքսուհին քսան ոսկի հաւաքած է, և մեծ ամօթ է ինձ անկից պահաս հաւաքել » :

« Գիտե՞ս ինչ է որբերու պատասպարանը » , ըսի ցած ձայնով մը :

— Ձէ տէր իմ, չեմ գիտեր դեռ, պատասխանեց :

« Ուստի տիկին գնա՛ և ուսիր, և երբոր գիտնաս թէ ինչ է թշուառութիւնը, երբոր լինիս աղքատ, ծեր, տկար և տգեղ, նախափնքով ու խայտառակութեամբ բեռնաւորեալ, այն ատենը եկուր ինձ, յիշէ Կարլօթը, և ես նորա սիրոյն համար քեզի պիտի օգնեմ » ըսի իրեն, մինչդեռ սիրտս կը նետէր և հոգիս կը նուաղէր :

Այս խօսքերուն վերայ ելաւ Հէնրիադդա, շտկեց ինքզինքը, հայելին նայեցաւ և ելաւ գնաց առանց բարկանալու . սիրտ ունեցողաց վերջին զգացումը բարկութիւն է :

Թէեւ քիչ մը տխրեցայ ըրած ընդունելութեանս վերայ, սակայն երբ խորհեցայ որ նա


Թէեւ գեղեցիկ բայց անարժան էր նուերի՝ հան-
դարտեցայ, մանաւանդ երբ մտածեցի որ Կար-
լոթը մոռցեր էր. այս վայրկենիս որոշեցի նաևս
որ հէնրիադդայի բոլոր ընթացքը դիտեմ, եւ
շուքի նման նորա հետեոիմ մինչեւ իւր կենաց
վախճանը որ անտարակոյս երկար չի պիտի տե-
ւեր. մարդ մը սիրեր էր զայն դիպուածով, ուս-
տի հարկաւ օր մըն ալ զայն երեսէ պիտի թո-
ղուր ԴԻՊՈՒԱԾՈՎ մը, ինչպէս որ շատ անխո-
հեմ կանանց պատահած է, որոնք քիչով չի բա-
ւականալով կամ ճաշակ չունենալով հարուստ
ներու խաղալիկ կը լինին, և յետոյ երեսի վրայ
կը թողուին անասնոց պէս սատակելու :

Ամենէն թշուառ արարածը կինն է Արար-
չին պատկերովն ստեղծուած. նորա մանկու
թիւնը տկար է և սնտոի զբաղմունքներով վատ-
նելի, աղջկնու թիւնը խոստում է կամ սպառ-
նալիք. և իւր քսաներորդ տարին պատրանք
խաբուելով սրիկայէ մը կը կործանէ յիմար մը,
և իւր չափահասութեան մէջ երկրիս վրայ դը-
ժոխք մը կը լինի նա :

Կանցնի նա ձեռքէ ձեռք, իր անձէն մէյմէկ
քիչ բան թողլով ամեն մէկ նոր տիրոջ քով,
իւր անմեղութիւնը, պարկեշտութիւնը, երի-
տասարդութիւնը, գեղեցիկութիւնը և վերջա-
պէս իւր վերջին ակրան — խեղճը մեծ բարե-
բաղդութիւն ունենալու է որ այս ամենէն վեր-

ջը հիւանդանոց մը ընդունուի . կիներ տեսած եմ, որոնք թէեւ գեղեցիկ՝ բայց քարերու վըրայ փչած են վերջին շունչերնին . ուրիշներ որ գողերու հետ կարգուած են . կը ճանչնամ մէկը որ ամուսնացաւ գրպանահատի մը հետ ի՞նչ արժէք ունեցան բոլոր ասոնց գեղեցիկութիւնը սակայն գեղեցիկութիւնը շնորհք մը առանց զին ունենալու . ո՛հ այս մէկ խօսքը ի՞նչ երջանկութիւն , սէր ու յարգանք չազդեր . բայց վայ հազար այս երկնային և Աստուածային ծածկոյթին՝ որոյ տակը սիրտ չի կայ :

Սակայն ի՞նչ հարկ կայ ուրանալ . Հէնրիադդայի սէրը չէր ելած սրտէս . կը սիրէի ես զինքը , չէի կրնար չը սիրել . գեղեցիկ էր նա , հըրասողուրիչ . ո՛հ իրեն համար ամեն բան կը մոռնայի , երջանկութիւնս անգամ կուտայի , անմեղութիւնս ալ և երիտասարդութեան ամեն զուարճութիւններս ալ . . . Հէնրիադդան՝ Հէնրիադդան էր , և իմ սէրս Հէնրիադդայի վրան :



ԳԼՈՒԽ Ե .

ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

Հէնրիադդայի վերայ սրտիս մէջ ծնած և օրէ օր գօրանալու ճամբան բռնած համակրութիւնս և սէրս՝ օր մը զիս կրկին անգամ գէպ ՚ի

Վանպէս տարին , ուր երբ Պօն Լաբէնի պանդոկը
գացի յանկարծ կայնեցայ , և սկսայ մտածել
թէ այն տեղն էր որ առանց իմ գիտութեան
բոլոր երջանկութիւնս եղծուեցաւ . այն տեղն
էր որ յիմարական գաղափար մը զիս գիւղացի
աղջկան մը կեանքը դիտելու մղեց :

Մտայ պանդոկին պարտեզը , ուր գրեթէ
մարդ չի կար . օդը տաք էր , ուստի շքատու
ծառի մը տակն դրուած սեղանի մը քով նստայ
և սկսայ մտածել նորա վերայ՝ որ կը սիրէի ու
կատէի , կատէի ու կը սիրէի :

Ինձմէ քիչ մը հեռու ծառի մը տերեւնե-
րուն ետեւն երկու անձինք նստած էին , որոնց
մէկը կին մըն էր գեղեցկաբար զարդարեալ , և
միւսը դեռահաս և բարեկազմ երիտասարդ մը
որ ջերմութեամբ կը խօսէր իւր գեղանի ընկե-
րին , մինչդեռ նա անտարբերութեամբ կը նա-
յէր նորա վերայ . այս կնկան անտարբերութիւնը
իմ ուշադրութիւնս գրաւեց . նորա գեղեցիկ
ձեւը տենջանք մը բերաւ սրտիս երեսը տեսնե-
լու , սակայն ունայն տեղը աշխատեցայ հետա-
քըքրութիւնս յագեցնել , նա երբէք իւր գիր-
քը չէր փոխեր . այս միջոցիս աղքատ և քալե-
լու անկարող մարդ մը իւր կնկան բազկին կր-
թընած եկաւ մուրալու . մարդուն կերպարան-
քը գէշ չէր և ձայնը առոյգ , որոյ վերայ ի
դու թ շարժեցայ . այս մարդը նախ ինձ գայլով

և ինձմէ ընդունածը գրպանը դնելով գնաց և մօտեցաւ երիտասարդին և նորա ընկերուհիին . կինը զանի այնպիսի եղանակաւ մը վռնտեց որ խեղճ աղքատը ստիպուեցաւ ետ դառնալ . բայց երբ իւր հեռանալու վայրկենին մի անգամ նստեցաւ զինքը վռնտողին երեսը , դարձաւ ըսաւ իւր կնիկանը :

« Կնիկ սա աղջիկը մեր զաւակին շատ կը նմանի » :

Խեղճ կինը երբոր լսեց իւր աղջկանը անունը՝ հառաջանք մը արձակեց , և երբ որ լաւ մը նկատելով ճանչցան իրենց զաւակը՝ մէկէն ուղեցին զանի գրկել . բայց Հէնրիադդան—որոյ դիրքը փոխուելով տեսայ և ճանչցայ—ոտքի ելաւ և զզուանքով մը ետ ետ գնաց , ասոր վրայ հայրը չի դիմանալով աղաղակեց :

— Ծնողացդ սիրոյն համար լինի աղջիկս ճանչցի՛ր մեզ , ընդունէ՛ մեզ , մեր աղջիկը եղիւր և սրբէ՛ սա դառն արտասուքը որ քեզ համար կը հոսեն միշտ :

Հէնրիադդան երեսը անդին դարձուց :

— Երկնից անուանը համար լինի Հէնրիադդա կրկնեց մայրը « ընդունէ՛ մեզ և մենք կը մոռնանք անցեալը , կը ներեմք քեզի » :

Հէնրիադդան դեռ լուռ էր . ալ չի կըցի դիմանալ ուստի աեղէս ելելով նորա մօտեցայ , և ըսի :

— Կարլօթի անուանը և սիրոյն համար լինի • նայէ՛ և կարեկցութիւն ունեցի՛ր քու ճնողացդ վրայ որ ոտքերուդ առջեւն կը կենան ” •

Հայրն ու մայրն ձեռքերնին երկնցուցին , բայց Հէնրիադդան մէկէն առաւ քալեց պարտիպէն , երիտասարդն ալ ետեւէն • իմ Կարլօթի անունը տալս Տերուհինն հետաքրքրութիւնը շարժած լինելով՝ իւր աղջկան հեռանալէն և աներեւու-
թանալէն վերջը հարցուց ինձ •

— “ Կը ճանչնայի՛ր Կարլօթը ” •

— Աւելին իմ բարեկամս ” պատասխանեցի իրեն , “ նորա վերայ հեծած եմ անգամ • ընտիր էջ մըն էր ” •

“ Այո՛ այո՛ ” ըսաւ Տերուհին “ օրը քսան բեռ կը տանէր ” •

— Ինչպէ՛ս եղաւ որ զանի կորուսիր ” հար-
ցուցի իրեն •

“ Տէր իմ , պատասխանեց նա հառաչելով , կինս շատ անգամ արտօնութիւն կու տար որ Հէնրիադդան նորա վերայ հեծնայ • այնքան կը սիրէինք զաւակնիս , որ շատ անգամ Կարլօթի տեղ ես կը պարտաւորէի բեռն տանիլ , որպէս զի աղջիկս էջն հեծնայ • արդ՝ օր մը — կենացս մէջ չը պիտի մոռնամ — Հէնրիադդան հեծաւ էջն ու դնաց եւ մէյ մըն ալ ետ չի դարձաւ ոչ ինք եւ ոչ ալ Կարլօթը • կինս այն օրուընէ հետէ կու լայ Հէնրիադդային համար՝ եւ ես

Հէնրիադդային եւ Կարլօթին համար . աղջիկնիս
մեր ուժը կը նորոգէր եւ Կարլօթնիս ապրուստ
նուս կօզնէր . մէկ օրուան մէջ երկուքը միա
տեղ կորուսինք , եւ այժմ ստիպուած եմք մու
րալու :

« Խեղճ Հէնրիադդաս » , ըսաւ կինը՝ որ աչ
քը գետինը տնկած կարտասուէր :

« Ա, յո՛, խեղճ Հէնրիադդա եւ խեղճ Կար
լօթ » դռնեց մարդը հեծկլտալով . — մեռաւ
Կարլօթը , ըսի ես ալ շանց ահռաներուն տակ ,
ղիս վայրկեան մը զբօսցընելու համար » :

Այս խօսքս այնքան ազդեց նոցա , որ վայ
րի գազանէ մը հեռանալու պէս հեռացան ինձ
մէ . ՚ի զուր տեղը աշխատեցայ զանոնք հան
դարտեցընել , փախան նոքա քովէս երեսս ան
գամ չինայելով եւ ոչ ալ ըսածներուս միտ դը
նելով :

Բայց ես , որ ոչ խեղճ կնկան կաթոփն սնած
էի , ոչ ալ նոցա սեղանէն կերակրուած . ի՞նչ ի
րաւունք ունէի անոնց այնքան ցաւ պատճառե
լու :



ԳԼՈՒԽ Զ.

Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Ց

Ի զուր տեղը կաշխատէի մոռնալ Հէնրի
րիադդան , ունայն տեղը կը փափագէի որ նորա

աղբեցու թիւնը հեռացնեմ սրտիս վրայէն . ու
նայն տեղը այս ջանքս ու փափագս զիս ա
ւելի կը հաստատէին յիմարական և ամօթալից
սիրահարութեան մէջ . իսկ աշխարհիս մէջ չէի
կարող գտնել այն պիտի առարկայ մը՝ որ ինձ մոռ
ցընել տայ մոլութեան ամենազազեր պղծու
թեանց մէջ շարունակ Հէնրիադդան . և ինչո՞ւ
չի համարձակիմ խոստովանիլ թէ աշխարհս մի
այն մէկ առարկայ մը ունէր իմ սիրոյս ենթա
կայ և այն էր Հէնրիադդան , Հէնրիադդան՝ որ
գեղեցիկ պահարան մըն էր միայն , և կատարեալ
լինելու համար անոր մէջ սիրտ մը կը պահսէր :

Մէկ առաւօտ մը դարձեալ հանդիպեցայ
ես այս անգգայ արարածին . բայց ի՞նչպէս հը
նարաւոր է ինձ պատմել թէ ո՞ւր տեսայ զինքը .
սակայն պարտիմ պատմել ըստ որում անկատար
պիտի լինի իմ պատմութիւնս թէ որ Հէնրիադ
դայի ամեն մէկ քայլափոխը չը յիշեմ :

Տեսայ ես Հէնրիադդան կանանց ամենէն
թշուառ , ամենէն գարշելի և ամենէն զգուելի
պատասպարանին մէջ , ուր մարգրտէ ատամանց
կրճառումը միշտ լսելի է . ոչ թէ յարգանաց՝ այլ
կարեկցութեան արժանի հիւանդանոցի մը մէջ .
ուր բժիշկն անգամ զգուելով կը նայի իւր խնա
մատարութեանը յանձնուածներուն վերայ , այս
հիւանդանոցը բանա մի է և դարմանուողները
կանկրացեալ :

Ռուի Սան ճաքի դագաթը Քօչնի հիւանդանոցին և Շնորհաց Յորին մէջ տեղը հին շէնք մը կը տեսնուի, տխուր կերպարանքով և առանձին, մետասաններորդ դարու կատարեալ նկարի մը նման. այս շէնքը հիւանդանոց մըն է՝ ուր մանեղուդ պէս պիտի հանդպիս կոշտ պահապաններու, անկարեկից բժիշկներու և անվստահելի դարմանողներու. քաղաքներ զարհուրեցընող ժանտախար հոս կը բնակի իւր ամենասուկալի կերպարանքովն :

Ասոնցմէ աւելի զարհուրելի է մտածելը թէ՛ հոս դարմանողները չեն կրնար եւ կամչնան յայանել իւրեանց ցաւերը. այս հիւանդանոցին մէջն են սոսկումն, անօթութիւն, մաշող կիւրք, անհանգստութիւն, զղուանք, սիրտ հասնում եւ նուազում, իրենց ամեն աստիճաններովը. այս է ահա հոս գտնուողաց կեանքը. թէ որ թունաւոր օդ ծծելը կեանք անուանել օրինաւոր է, ժանաահոս է հոս օդը եւ ջուրը՝ որ ամեն տեղ կը վազէ, թունալից է մաճուցիկ :

Ես տեսած եմ հոս կանանչ դոյնով, ապուշ եւ դատողութենէ զուրկ երիտասարդներ, որոնք զո՛հ եղած հեշտական կրից. վերջապէս հոս գտնուող հիւանդները յանցաւոր են եւ դանդատելու ամենեւին երես չունին. նոյն գոտութիւնը, նոյն ամօթը, նոյն աղտոտութիւնը եւ նոյն յուսահատութիւնը ամենուէն ալ դէմ-

քին վերայ դրոշմուած է, որոնց եւ ոչ մէկն
կրնայ ազատաբար վեր վերցընել իւր ճակատը :
Երբ տեսայ այս զգուերի տեսարանը, դողացի եւ
ուզեցի փախչել հեռանալ այն անկեղանոցէն . եւ
երբ ճիշդ սկսեալ էի դուրս ելլել, մէկը մօտե-
նալով ինձ իմացուց թէ հիւանդանոցը ուրիշ
մաս մըն ալ ունի, ուր կանայք կը դարմանուին .
Կանայք հո՛ս, գոչեցի զարմանալով . կա-
նայք . . . ախոս որ լրածս ճշմարիտ էր :

Հագիւ թէ անկիւն մը դարձայ, ահաւասիկ
առջեւս սնտուկներ ելան, որոնք ժանտահոտ
գաթ կը մատուցանէին իւրեանց դիրկն գտնուող
ժանտացեալ երախայներուն . սակայն ասոնց նայ-
ուածքը բարկութենէ առաւել կարեկցութեան
կը շարժէր մարդս . խեղճ գիւղացի աղջիկներ,
որք արտասուաց մէջ թաղուած՝ իւրեանց հի-
ւանդութեան վերայ գաղափար մը չունէին, եւ
բամպակեայ գոգնոցներովն զլուխնին կը ծած-
կէին, երբ մէկն իրենց վրայ կը նայէր ծաղրելու
կամ զթալու համար .

Այս վերապին դրանը քով Նիօպէի արձա-
նին նման անշարժ դեռահաս ու անմեղ կին մը
կանգնած էր, ամուսնական պահանջման խղճա-
լի զո՛հ մը, որ կսպասէր հոն անկողին մը ստա-
նալու . ի՛նչ սոսկալի իրողութիւն . կին մը՝ որ
երախայ կը սնուցանէ, աղջիկ մը՝ որ սիրահա-
րութեան կը զոհուի եւ մինչեւ անգամ առա-

քինի կանայք այս ժանտախտէն կը բռնուին . ապերջանկութիւն . բայց ասոնցմէ աւելի ո՛րքան կարեկցութեան արժանի են անոնք , որոնք հիւանդանոցն իբրեւ իրենց տունը կը նստին , կը խաղան , կը խնդան ու կերգեն հոն , իբր թէ հանգիստ կառնուն աշխատութիւններնուն .

Երբ ես հոս մտայ , կնիկներուն ամենքն ալ խնդալու եւ զանազան կերպ խաղեր խաղալու զբաղեալ էին , եւ ոմանք ալ քօղարկուելու . ասոնցմէ ամենէն ծաղկահասակները — որոնք գըրեթէ մերկ էին — կը վիճէին մէկգմէկու հետ թէ մէջերնուն ո՞րն աւելի ծաղկահասակ է . ու մանք ալ զարհուրելի կերպով կը հայհոյէին եւ կամ տուփական երգեր կերգէին . հոս դանուող կանանց շատերը այնքան պայծառ , մաքուր եւ երջանիկ էին , որքան որ արուները գունաթափ , ապուշ , աղտոտ եւ տխուր էին . տարաբաղդ կանայք՝ որ հոս անգամ բաւական գեղեցիկ մը նացեր էին , անխորհուրդ էակներ՝ որ երգելու սիրտ ունէին եւ կարող էին խնդալով տանիլ իւրեանց տանջանքները . Գթառատ երկինք . ո՛րքան գեղեցկութիւն շնորհած ես դու կանանց քու բարկութեանդ միջոցին . խեղճ ու անիծեալ արարածներ , որոնք կարող էին պատիւ լինիլ , պատանեկութեան փառք տան , զօրութիւն յարաբերութեան եւ մխիթարութիւն ծերութեան . բայց ափսոս որ դեռ քսան տարե-

կան չեղած ամեն բարեմասնութիւն կորուսած էին . պատանեկութիւն , առաքինութիւն , գեղեցկութիւն , ընտանիք , սէր եւ ամուսնութիւն . մանկութիւնը եւ ծերութիւնը մեկտեղ կցած էին . ասոնք ջնջին հատուցմամբ մը , երկինքէն ընդունած ամեն շնորհքներնին վերբերու հետ փոխած էին . — շնորհք , պատանեկութիւն , զուարթութիւն , առողջութիւն եւ երջանկութիւն — ասիկայ արդարեւ ոոսկալի է . խիստ սոսկալի :

Մինչդեռ սրտի մեծ ցաւով կանգնած այս խորհրդածութիւնները կընէի , յանկարծ ամեն ձայն լռեցին , եւ բժիշկն եկած լինելով սկըսան մի առ մի երթալ ուր որ հարկ էր :

Փոքրիկ սենեակի մը մէջ անկողին մը դըրուած էր , որոյ չորս կողմը վերաբուժական գործիքներ ցրուած կը կենային եւ մէկ կրակարան մը կրակով լեցուն՝ երկաթներն տաքցընելու համար . սենեակին մէջ միայն մէկ նստարան մը կար եւ անոր վրայ ալ բժիշկը նստած էր , որ աւելի դերասանուհեաց և օրագրութեանց վերայ կը խօսէր քան թէ իւր գործին կը նայէր , մինչդեռ կիսամերկ կանայք կսպասէին որ կարգաւ դարմաննին ընդուննին : Չայն մը լսուեցաւ եւ ետեւէն անուն մը « Հէնրիադդա , Հէնրիադդա » եւ ասա կանանց խումբին մէջէն յառաջ եկաւ նա հպարտութեամբ — դեռ գե-

զեցիկ էր նա — եւ կատարեալ անտարբերու-
թեամբ ինքրզինքր անկողնոյն վերայ նետեց գոր-
ծողութեան հաճութիւնը վայելելու համար .
բժիշկը մկրատը ձեռքն առնելով սկսաւ իւր
գործողութեանը . Հէնրիադդա մինչեւ վերջը
ձայն չը հանեց , քանի որ ես զարհուրանքով եւ
կարեկցութեամբ , սիրով եւ զգուանքով նորա
վերայ կը նայէի , եւ այն փափուկ կազմութեան
ենթակայ եղած տանջանքներուն համար սիրտս
կտոր կտոր կը լինէր . Գործողութիւնը լմնցաւ ,
ու Հէնրիադդա ելաւ գունաթափ ու նուաղ-
եալ . իսկ ես այնքան շուարած էի , որ նորա ան-
հետանալն չէի տեսած :



ԳԼՈՒԽ Է.

ՆՈՒԱՍՏՈՒԹԻՒՆ

Հէնրիադդան՝ որ իր անօրինակ գեղեցկու-
թեամբը գրեթէ ամեն զինքն տեսնող երիտա-
սարդաց սիրտն կը գրաւէր , վերջապէս այնպիսի
անձի մը յանձնած էր ինքզինքն՝ որ ալ բանի մը
կարօտութիւն չունէր . փառաւոր տուն մը ա-
մեն գեղեցիկ զարդարանքներով իրեն բնակա-
րան եղած էր . կառքեր , ձիեր , ծառաներ , ա-
ղախիններ , ամենքն ալ իրեն կամացն յանձ-

նուած էին • պարտեզներ և բուրաստաններ իւրեն համար ծաղկած ու վարդարուած էին • վերջապէս հարուստ տիկինի մը վայելած ամեն ճոխութիւն ունէր նա • բայց ասոնց ամենքը իրենը չէին • ուրիշի մը կը վերաբերէին՝ որոնց մէ մէկ վայրկեանի մէջ կրնար զրկուիլ, և ինչպէս որ եղաւ ալ • վասն զի ճոխութիւնը զինքն այն աստիճան մոլորեցուցած էր, որ կը կարծէր թէ աշխարհ իւր հրամանաւն պարտի շարժիլ, և այս խորհրդով՝ չէր անհաւատարմութեամբ բռնուեցաւ, զիշեր ժամանակ մինակ մէկ շըրջազեւստով մը իւր ամեն վայելքներէն մէկէն զրկուելով, ինքըզինքն փողոցին մէջ գտաւ կատարելապէս անօգնական •

Հէնրիադդա արթնցաւ, բայց ուշ • իսկ կատաղութիւնը սրտին մէջ այն աստիճան բարձրացաւ, որ անմիջապէս ինքզինքը ամենէն առաջ առջեւն ելլողին յանձնեց • — գինով և ախտաւոր աւազակի մը — որն որ զինքն ամենազարշելի բողանոց մը տանելով, առաւ իրեն այն դժոխային ախտը՝ որոյ համար Հէնրիադդա հիւանդանոց մտնել պարտաւորած էր •

Հիւանդանոցի մէջ հարկ եղած դարմանն և բժշկութիւնն ընդունելէն յետոյ, Հէնրիադդա տեղ մը չունենալով երթալիք, ինքըզինքը ծախած էր Մատամ տը Սան Փար անուէն հոչակաւոր բողապետին, և որոյ տան մէջ ընդունած հրա-

մաններուն համեմատ պարտաւոր էր վարուիլ՝ գիշեր և ցերեկ ամեն ժամ խնդում երեսով ամեն անցնողներուն նայելու, ամենուն հետ սիրով խօսելու, միայն ստակ չունեցողներն մերժելու, գիշերները փողոցէ փողոց շրջելով Մատամ Փարի շահուն համար աշխատելու էր։ Ահարկով նուաստութիւն, հին ու մին հանդերձանք իշխանուհի մը վեհանձնութեամբ հագնիլ, և իւր գեղեցկութիւնը ամեն անցողիներու քմացն համեմատ գործածել կը պարտաւորէր, իմ սիրոյս առաջին առարկան, Հէնրիադդան, Վանվէսի կոյսը . . . երանի թէ զինքն բընաւ տեսած չի լինէի, երանի թէ զինքն չի սիրէի, և հազար երանի թէ որ իւր բոլոր ընթացքներն չի դիտէի։

Ո՛հ, գեղեցիկ և փառաւոր Հէնրիադդան՝ հիմայ հասարակ բող մը եղած էր, անզգայ ու նուաստ։

ԳԼՈՒԽ Ը.

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Տարաբաղդ Հէնրիադդան՝ որ իւր գեղեցկութեան բարձրութենէն ուր կոխելէքը չի դիտնալով, սրտի և դատողութեան առաջնորդութիւնն չունենալով, ինքզինքը նետած էր անտահման և անորոշ վեհի մը մէջ. ո՛հ, ալ չու-

ներ մէկն որուն ապաստանէր, մէկն որ իւր վերայ կարեկցութեան շարժէր, մէկն որ նորահամար արտասուէր :

Խեղճ Հէնրիադդային կուրծքը ծանրացած էր և ալ չէր կարող հանդուրժել իւր նուաստութեանը . մանաւանդ երբ կը խորհէր թէ պատառ մը հաց գանելու, ձեռք մը հանդերձ ունենալու և բնակարանի մը մէջ գտնուելու համար պարտաւորեալ էր ամեն իրեն եկողներն շողոքորդել, նոցա վերայ սէր ցուցնել և զանոնք իւր մեղսալից անկողնը առաջնորդելով գրկել, համբուրել և իւր նազելի մարմնոյն ջերմութեամբը անոնց հեշտութեանցը ծառայել :

Անկարագրելի նուաստութիւն, որոյ մէջ կանայք որքան յառաջանան, այնքան աւելի կը ցրտանան . յոյս չի կայ այս ճամբուն մէջ . հոգին անգամ մինչեւ առաւօտ վառ մնացած կանդեղի մը լոյսին նման ամեն վայրկեան կը նուազի, կը պլպլուրայ դողալով և կաշխատի խոյս տալ այն մարմինէն որ ալ իրեն սնունդ մատակարարելու կարողութիւնը չունի :

Հէնրիադդան որ ալ գիտէր թէ դէպ ՚ի գերեզման կշտապէ, չէր ուզեր իւր պաշտօնին մէջ գանգատանաց տեղի տալ, այս պատճառաւ խստիւ կը գործադրէր այն ամեն պահանջումները որ իրեն կը լինէին . գիշերն իւր իշխանութիւնը ձեռք առած էր . և արհեստն խաւա-

ըին դէմ կը մարտնչէր իւր լուսատու գործիք-
ներուն , բոլոր քաղաքն իրար անցումի մը մէջ
էր . թատրոնները , պարահանդէսներու տու-
ները , երաժշտութեանց սրահները , երգուհի-
ներու պարտէզները և ասոնց նման ամեն դի-
շերային զուարճութեանց տեղերը նոր արթ-
նութիւն մը առած էին . իսկ քաղաքին բոլոր
ժողովուրդը քանի մը մեղամաղձոտ զրազէտնե-
րէ և քաղաքագէտներէ 'ի զատ ոտքի վերայ էր .
ոմանք գեղեցկապէս զարդարեալ ընկեր մը կամ
ընկերուհի մը կը փնտրուէին , ոմանք յուսալից
սրտով պարահանդէսի մը տոմսակները կը գնէին
և ոմանք ալ կը դիմէին այն վիրապներն , ուր
ստակն ու պատիւը միատեղ կը կորնջին . իսկ
թշուառ Հէնրիադդան ալ ուսին վերայ բարակ
շալ մը առած՝ դանդաղ քայլերով մեծ փողոցի
մը մէջ կը շրջադայէր , իրեն բարեւ տուող մը
դանելու համար .

Թիւիլերսի մեծ փողոցին մէջ էր Հէնրիադ-
դան՝ ուր հովը մեղմաբար անցնելով ծեր ծա-
ռերուն տերեւներուն մէջէն , նորա գեղեցիկ
մազերուն մէջ կը մտնէր . ամեն անցորդներ ի-
րեն կը նայէին սրտերնին տրոփելով , և իրեն զա-
նազան գովեստներ ընելով . բայց Հէնրիադդա-
չէր նայեր մէկու մըն ալ երեսը , և կը մտածէր
թէ իւր փառքը ի՞նչ արժէք կրնայ ունենալ՝
քանի որ պարտաւորեալ էր ամենուն փափա-

քանացն հնազանդիլ, ընդունիլ ամենուն գրե-
կախառնութիւնը, և գրեթէ ամբողջ հասա-
րակութեան բազուկներովը շջապատուիլ:

Հէնրիադդայի մտածմունքներն բազմացան
եւ մինչդեռ կը շջէր, կըսէր ինքնիրեն. « որո՞ւ
կը վերաբերիմ ես հիմայ. ամեն մարդ իմ տէրս
եւ ես ամենուն գերին եմ, ով որ ուզէ կրնայ
զիս վայելել . . . » հազիւ թէ այս տխուր մը-
տածութեան սկըսած էր եւ սրտին ծանրութե-
նէն քիչ մնացեր էր որ խելքն կորսնցընէ, ահա
գինով մարդ մը իրեն մօտենալով հրամայեց որ
ետեւէն գայ. Հէնրիադդա իւր ընդունած հը-
րահանգաց համեմատ մէկէն հնազանդեցաւ.
բայց ո՞րքան զարմացաւ, ո՞րքան վշտացաւ եւ
սիրտը ի՛նչ կատաղե վրէժխնդրութեամբ լեց-
ուեցաւ, երբ տեսաւ որ այն մարդը իւր ան-
մեղութիւնը յափշտակողն էր, իւր առաջին
տարիածուն, իւր մոլորեցուցիչը. մէկ խօսքով
իւր կուսութիւնը եղծողը . . . լոյս մը անցաւ
ուղեղին մէջէն, կիրքը տիրեց սրտին մէջ եւ ար-
իւնաներկ խորհուրդ մը հողւոյն խաղաղութիւն
տուաւ:

Բերանը չը բացաւ Հէնրիադդան, այլ լիովին
կամացն համեմատ տարաւ զայն իւր տարտարու-
սը. ջղալից ներքին յուզմունքը, շողոքորթեց
զանի եւ մինչեւ անգամ թող տուաւ որ իւր
հին ու վերջին տարիածուն ամեն հաճոյք վա-

յեւելէն վերջն քնանայ •

Բողանոցը կատարեալ լռութեան մէջ էր ,
 Էսբէր ու Մօրբէոս իւրեանց քօղովն ու թմրե-
 ցուցիչ ներգործութեամբը այս վերապն ծած-
 կած էին աշխարհիս աչքէն • միայն մէկ հոգի
 մը կար արթուն • աչք մը բաց , եւ սիրտ մը որ
 կը տրոփէր • Հէնրիադդային վերայ իշխանու-
 թիւն չէր կրցեր ունենալ Մօրբէոս • իսկ Էսբէր
 մեծ օժանդակութիւն ընել կը խոստանար Հէն-
 րիադդայի • Հէնրիադդայի՝ որ իւր տարփածւոյն
 քովէն ելլելով գնաց ու փոքրիկ գզրոցէ մը դա-
 շոյն մը հանեց • Վրէժխնդրութիւնը այն աստի-
 ճան բարձրացած էր սրտին մէջ , որ ընելիք ե-
 դեռնագործութիւնը աչքին չէր երեւար • ձեռ-
 քի դաշոյնը սուր էր , եւ բան մը չէր արգիլեր
 զինքը՝ միտքը դրածն ընելէ • ուստի թեթեւ
 քայլերով մօտենալով իւր որսին , մէկդի քաշեց
 վերմակը նորա վրայէն , եւ առանց վայրկեան մը
 կորսնցընելու գամեց դաշոյնը այն սրտին , որ
 հանդարտութեամբ կը նետէր •

Հարուածը անվրէպ կատարուած էր , երբ
 հարուածուողին սուր ճիչը ամբողջ տունը ար-
 թընցուց • Մօրբէոս եւ Էսբէր անհետացան
 եւ ձգեցին Հէնրիադդան ըրածին հաշիւը տա-
 լու •

Ճիշդ այս միջոցին էր , երբ ես իմ մէկ բա-
 րեկամիս հետ հասայ հոն • արդէն մարդասպա-

նութեան գուժը լսուած էր, թաղեցիք ոտքի վերայ էին, եւ ոստիկանութիւնը իւր պաշտօնը ձեռք առած էր:

ԳԼՈՒԽ Թ.

Մ Ա Հ Ո Ւ Ա Ն Վ Ճ Ի Ռ

Երբ որ իմացայ թէ՛ Հէնրիադդան էր մարդասպանը, վայրկեան մը թէեւ լեցուեցաւ աչքերս, սակայն մտածելով, թէ ալ նորա վատութեան եւ նուաստութեան վախճանը հասած է, մէկ անսովոր մխիթարութիւն մը զգացի սրտիս մէջ, ուժ առի եւ ոստիկանութեան հետ տունը մտնելով, Հէնրիադդայի սենեակը մտայ. Սենեակին ժանտալից հոտը, կահ կարասեաց խառնափնթորութիւնը, ասդին անդին ցրուած աղտոտ հանդերձները, պատուտած թաշկինակները, հին կօշիկները, իւղոտ շիշերը եւ պիղծ վարդոյրները ահարկու տեսարան մը կը ներկայացնէին. մանաւանդ երբ ասոնց մէջ առջեւնիս փռուած կը տեսնէիք մերկ եւ արիւնլուայ դիակ մը, որն սր Հէնրիադդա սպաննելէն վերջը իւր սնդիկաշաղաղ անկողինէն վար ձգեր էր:

Երբ սենեակէն ներս մտանք, Հէնրիադդան տրձանի նման կանգնած էր իւր ճերմակ շապի-

քէն ՚ի զատ վրան հանդերձ չունենալով, գեղեցիկ, փափուկ եւ երկայն մազերը իւր ձերմակ ուսերէն վար ցրուած էին, եւ շնորհակալութիւն իւր մարդասպանութեանը, ըստ որում այս վայրկենին նորա վրայ նայողը ամենեւին չը պիտի կարծեր թէ տեսածն անհամեստ կին մըն է:

Թշուառ կին. ներս մտնելուս պէս իմացաւ թէ ալ որու կը վերաբերի հոգևով ու մարմնով, ոստիկանութեան, որ իւր կենդանի օրէնքն էր եւ որոյ դէմ բան մը չունէր զրուցելիք, ուստի ինքզինքը բոլորովին պարտաւոր ցուցուց նորա հետեւելու. եւ երբ ոստիկանութիւնը իրեն մօտեցաւ՝ խղճալի, սակայն հանդարտ հայեցուածք մը նետելով նորա վերայ երկնցուց իւր նազելի բայց ուժաթափ բազուկները. ա՛հ, այն մանտրօտիկ ձեռքերը որ երկաթեայ բազկարգելներուն համար խիստ փոքրիկ էին, ոստիկանութիւնը իւր պարտքը կատարեց. եւ Հէնրիադդա ձեռքերն շղթայակապ բազմութեան մէջէն հետեւեցաւ իւր տիրոջը՝ կարծես բազմութեան աղաղակներն ամենեւին չը լսելով. . . . բայց ես ի՞նչ եղայ, երբ տեսայ որ ալ կորուսի Հէնրիադդան. ո՛հ, ի՞նչ էր նորա արժէքը եւ միթէ հնարաւոր էր, որ աշխարհի բոլոր ոսկիովք գանի գնէի. մարդասպանութիւնը զայն անգին ըրած էր, նա ալ փրկուած էր ջնջին գնով

մը զնուելու նուաստութենէն . ալ կարող չէր նա ինքզինքը ծախելու , ազատած էր վատութենէ ու անարգութենէ . վշտացս մխիթարութիւն կը յաջորդեր երբ ասանկ կը խորհէի . . . ո՛հ , այս վարկեանէս անդին ես Հէնրիադդան աւելի սիրեցի , խորհելով թէ արիւնը զինքը սրբացուցած է ալ , նա այն մարդն սպաննելով հազիւ արգարութիւնը տեղը զնաց , վասն զի այն մարդն էր որ Հէնրիադդային կորստեանը եւ անարգութեանը պատճառ եղաւ .

Օրեր անցան եւ Հէնրիադդան մոռցուեցաւ , մէկ սիրտ մը կար նորա կապուած եւ ան ալ իմ սիրտս էր . ես միայն հաւատարիմ մնացեր էի , եւ որոշեր էի իրմէ չը հեռանալ մինչեւ որ դահիճն բաժնէ զայն ինձմէ . Խաղաղ էր Հէնրիադդան եւ աւելի գեղեցիկ . եւ դատաստանի ժամանակ , թէ իրեն կողմանէ եւ թէ իրեն դէմ եղած փաստաբանութեան մէջ ինչպէս որ խօսք չեկար նոյնպէս ալ բոլոր եղած խօսքերը ու քրննութիւնները Հէնրիադդայի մտադրութիւնը չէին գրաւեր . եւ երբոր իրեն հարցուեցաւ թէ՞ ի՞նքն սպաննեց , ամենայն քաղաքավարութեամբ եւ անուշիկ ձայնով պատասխանեց « Ս,յո՛ » թէեւ շատ լաւ գիտէր թէ դահիճն ու գլխատութեան գործիքը իրեն կսպասեն . Դատը լմնցաւ եւ մահուան վճիռը տրուեցաւ եւ Հէնրիադդա , բանտ տարուեցաւ , ես ալ ու

րոշեցի այս ողբերգութեան մինչեւ վերջին կատարումը տեսնել :

Հէնրիադդայի բանտը , բարեբաղդաբար այն պիտի տեղ մըն էր , որոյ ներսի կողմը տեսնել հնարաւոր էր մէկ փոքրիկ պատուհանէ մը , որ լռիկ ձորի մը մէջ բարձր ժայռի մը զազաթին քովիկը կիյնար . արդ՝ Հէնրիադդան բանտ մը տած օրէն սկսեալ ամեն առաւօտ կանուխ դեռ արշալոյսն չարթնցած կերթայի յիշեալ ժայռին վրայ կը նստէի . եւ մինչեւ որ արեւն մարը մըտնելէն վերջը խեղճ Հէնրիադդան չը հանգչեր իւր խոտէ անկողնոյն վերայ , չէի հեռանար :

Մեծապէս մխիթարուած էի , որ վերջապէս Հէնրիադդան ազատած էր անարգութենէ եւ կսպասէի այն օրուան , երբ իւր արեամբը բոլորովն պիտի մաքրուէր . սակայն կոտորած սրտիս այս մխիթարութիւնն ալ անհետացաւ ինձմէ՝ երբ տեսայ որ Հէնրիադդան իւր մահուան վրձիուն ընդունելէն եւ ամեն ժամ իւր կեանքէն զատուելու սպասելէն վերջն ալ դեռ չէր զըզուած անարգութենէ , եւ ան ալ այնպիսի մարդու կամքին խոնարհելով , որ ամեն օր իրեն կը տոր մը չոր հաց բերած ժամանակ իւր սաղա յէլահան կերպարանքին համեմատ կոշտութեամբ կը վարուէր նորա հետ . այս մարդը հայրն անյայտ բանտապան մըն էր անխիղճ , անսիրտ եւ անօրէն , կերպարանքին տղեղութիւնը

անանկ չափէն աւելի էր, որ մարդ առանց Արարչագործութեան դէմ մեղանշելու կարող էր երդումն ընել՝ թէ նա բացառութիւն մըն էր մարդկային ազգին մէջ:

Ձէի ուզեր հաւատալ թէ Հէնրիադդան համակրութիւն մը ունէր այս գազանին վրայ, ուստի կսպասէի տեսնել թէ նոցա յարաբերութեանց վախճանը ո՞ւր պիտի կայանայ:

Օր մը սովորութեանս պէս երբ բանտին պատուհանէն Հէնրիադդան կը դիտէի, բանտապանը գիւական խնդումով մը ներս մտնելով շտակ Հէնրիադդայի քոփն գնաց... Երկինք դեռ կը դողդղայ ձեռքս... աչքերուս չուզեցի հաւատալ... շունչս կը կարճնար. այո՛, Հէնրիադդան ուրախ դիմօք դիմաւորեց իւր գարշելի տարփածուն, գրկեց զայն՝ եւ թող տուաւ որ այն ճիւղաղը իւր պիղծ շրթունքներով համբուրէ զինքը, իւր նազելի պրկունքները, իւր գունաթափ աչուրները, և իւր բարձր ու ձերմակ ճակատը եւ խոստում մը ընելով իր մէն հեռանայ:

Օրը երեկոյ եղաւ եւ ես վրան նստած ժայռէս աւելի անշարժութեամբ կսպասէի. արեգակն իւր մարը մտաւ եւ Տիեզերքը հանդարտութիւն զգեցաւ. խռովեալ էակ մը կար եւ ան ալ ես էի, աչքերս անշարժ կը դիտէին Հէնրիադդան որ նստած կը խորհէր, երբեմն երբե-

մըն ձեռքերովն ճակատն շփելով . բանտին դուռը բացուեցաւ . բանտապանն մէկ թեւին տակ խուրձ մը նոր խոտ եւ մէկ ձեռքն կանթեղ մը բռնած ներս մտաւ . կանթեղը գետինը դրաւ եւ խոտը փռեց գետինը եւ հրաւիրեց Հէնրի . աղդան որ հոն նստի . Հէնրի աղդան հնազանդեցաւ .


Ասոնք երբ կը տեսնէի , հազիւ թէ ինչ ընելէքս կամ խորհելէքս դիտէի եւ ոչ իսկ զգացմունքներուս տէր էի . . . Երկի՛նք . իւր բանտին մէջ . իւր մահուան անկողնոյն վերայ . իւր դահիճին . . . եւ ի՞նչպէս դահիճ . խենդ էի ես . . . խենդ մը , որ սրտիս մէջ դժբաղդութեան կծու ծանրութեամբը , յուսահատութիւն . զարմանք եւ կատաղութիւն կը կրէի . . . ո՛հ կը կարծէի թէ իւր անարգութիւնը վերջացած էր . բայց կը տեսնէի , որ նոր կսկըսէր և ան ալ աւելի անարգութեամբ . հիմայ աչքերս կը տեսնէին մէկ մարդասպան եւ անսիրտ կին մը , ապա շնորհ , սատանայի չափ տղեղ եւ գազանաբարոյ մարդու մը հետ . . . գամուած էի կարծես նստած ժայռիս վերայ . կը դողդղայի յուզմամբ . երակներս չէին նետեր . վայրենութիւն կու գար վրաս , կորսնցուցի ինքզինքս . սիրով կուզէի մեռնիլ . դեւերուն յանձնել ինքզինքս որ չի տեսնէի այն տարտարոսական բանտին մէջ տեղի ունենալէք . զազիր եւ արիւն ցամքեցնող տեսարանը . . .

անէծք իմ գլխուս եւ սրտիս վերայ որ թողուցի
 Հէնրիադդան այսպիսի շանական կրից նուիրուե-
 լու . . . անէծք ինձ որ այնպիսի անդամանդ մը չե-
 յափշտակեցի գարշելի աղտեղութեան մը մէջէն :

Հազիւ թէ սրտիս անօրինակ այլայլութենէն
 սթափեցայ , տեսայ որ բանտին մէջ լոյս չը կար .
 այլ ահարկու մթու թիւն մը կը տիրապետէր
 հոն . սակայն այս խաւարը երկար չը տեւեց .
 դարձեալ բացուեցաւ բանտին դուռը , եւ բան-
 տապանը ներս մտաւ կանթեղովն եւ սիրահա-
 ըի մը ամեն շարժումներովը :

Այս անգամ բանտապանը շուտ կը շարժէր ,
 կանթեղը գետինը դրաւ եւ գրպանէն շիշ մը
 գինի հանելով Հէնրիադդային տուաւ . յետոյ
 բանտին դուռը գոցելով եկաւ նստաւ Հէնրի-
 ադդայի քով եւ սկըսաւ զրկել զայն . . . ուզե-
 ցի ոտքի ելլել՝ չը կրցի . ուզեցի փախչել՝ կաշ-
 կանդուեցայ . ուզեցի պօռալ՝ լեզուս կապուե-
 ցաւ . երեսս անդին դարձընել ուզեցի՝ չը կրցի .
 վերջապէս ահամայ հանդիսական մը եղայ այն
 Հիմէնեան անկողնոյն , որոյ միմիայն զարդը պըլ-
 պըլացող պիղծ կանթեղ մըն էր եւ որն որ — շը-
 նորհակալութիւն յետին բարեբաղդութեանս —
 մարեցաւ կամ ինքնին կամ դիտմամբ . եւ ես ա-
 զատեցայ հոգիս տակն ու վրայ ընող այն գար-
 շելի զրկախառնութիւնը ամբողջապէս տեսնե-
 նելէն .

Մէկ ժամի չափ բոլորովին անզգայ մնալէս վերջը , գլուխս կուրծքիս վրայ թողած հեռացայ նիստես , եւ բնակարանս վերադարցայ , եւ մինչեւ առաւօտ ահագին մտաւորական ալէկոծութեան մը զոհ եղայ . երբեմն ապշութեան եւ երբեմն կատաղութեան՝ մէջ կիշնայի , եւ երբեմն առանց իմ կամքիս « երթամ ձեռքովս ըսպաննեմ Հէնրիադդան » կաղաղակէի



ԳԼՈՒԽ Ժ.

ՅԶՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐԴԵՄՆՈՒԹԻՒՆ

Արշալոյսն իւր կենդանարար զեփիւռը խրուկելուն պէս , ես ալ անկողինէս դուրս ցատկեցի եւ գրեթէ ինքըզինքս չի կօկած անմիջապէս բնակարանէս դուրս ելայ ո՞րը երթալու ի՞նչ ընելու չէի գիտեր :

Հագիւ օրուան կեսն անցած էր , տեղեկութիւն ստացայ թէ Հէնրիադդան նոյն օրը պիտի գլխատուի . ուստի մէկէն բանտ դիմեցի , ուր արդէն ոստիկան մը երկու սեւազգէստ բժիշկներով Հէնրիադդայի բանտն մտած էր .

Հէնրիադդայի անտարբերութիւնը որքան որ անօրինակ էր , նոյնքան ալ անօրինակ էր իմ սրբ-

տիս այլայլութիւնը, որ կը տենչար ժամ մը առաջ տեսնել Հէնրիադդայի մահը:


Ըստ սովորութեան բժիշկներէն մին մօտեհալով Հէնրիադդայի քննեց նորա երակը, եւ իմացուց ոստիկանութեան թէ նորա գլխատու մը արգիլելու պատճառ մը չը կայ. բայց միւս բժիշկը որ այս միջոցիս Հէնրիադդայի մօտեցած եւ նորա երակը քննած էր, առջև բժիշկին խօսքը կտրելով պոռայ « Պ սրն բժիշկ, կը ներէք. այս կինը յղև է և օրէնքին համեմատ պարտի ապրիլ մինչեւ որ ծնանի » առաջին բժիշկը կրկին շնորհամ քննելով Հէնրիադդայն՝ միւսին ըսածն հաստատեց, ոստիկանութիւնն ալ պարտաւորեցաւ Հէնրիադդայն ուրիշ բանտ մը տանիլ, որ պիտի մնար մինչեւ որ մար լիներ:

Հէնրիադդային այս ազատութիւնը զիս զայբացուց, եւ այն աստիճան զայրացուց՝ որ բարկութեամբ բանտէն հեռացայ ինքըզինքս կորուսած:

Ժամանակը ինչպէս որ բարեբաղդներուն, նոյնպէս ալ դժբաղդներուն համար շուտ կանցնի. մահը հաւասար քայլով կը մօտենայ ամենուն, եւ երբոր վրանիս կը հասնի երկիւղով եւ զարմացմամբ կը հարցընենք « ի՞նչ ժամ է այս » իմաստունը միայն օրինաւորութեամբ կը հաշուէ իւր ժամերը, եւ անանկին երկար կամ կարճ ժամ չը կայ:

Այսպէս ժամք, որք եւ ամիսք անցան Հէն-
 րիադդայի վախճանը որոշելու, Հէնրիադդայի՝
 որ շատոնց մեռնելու էր. վերջապէս իրիկուն
 մը չեմ գիտեր ի՞նչ նախատեսութեամբ խո-
 րունի քունիս մէջէն հանկարծ արթննալով ըս-
 կըսայ հաշուել ամիսները եւ օրերը — երկու ան-
 դամ հաշուեցի — եւ անմիջապէս Պուրպ* ա-
 ճապարեցի եւ գրանը քով կանգնեցայ :

Թէ որ հաշուս ուղիղ էր, Հէնրիադդայի
 զաւակը արդէն աշխարհ եկած լինելու էր,
 մահուան վճիռը արուած էր, բանտարկեալը
 մայր եղած էր եւ հիմայ իրեն կը մնար մեռնիլ
 . . . գլխատութեան գործիքը իւր որսը կը պա-
 հանջեր :



ԳԼՈՒԽ ԺԱ.

Վ Ե Ր Ջ Ի Ն Օ Ր

Միջոց մը գտնելով Հէնրիադդայի մեռնելու
 օրուան առաւօտուն իւր սենեակը մտայ . որուն

* Պուրպը վերջին ապաստանարանն է, ան-
 պաշտպան մօլի էրիկներ ունեցող եւ մահուան դա-
 տապարտուած յղի կնիկներու . հոս ծնող տղաքնե-
 րը աշխարհիս մէջ ուրիշ յուսաւիք մը չունին բաց
 'ի թշուառ կեանքէ եւ տարտամ մահէ մը :

հանդարտութիւնը, տկարութիւնը, գեղեցկութիւնը զիս արտասուաց շարժեցին. աղաչեցի հոն գտնուող Գլխութեան Քոյրերուն, որ մեզ առանձին ձգեն. ըսի նոցա թէ ես մահապարտին եղբայրներմ, եւ առանձին խօսելիքներ ունիմ. բարերար Քոյրերը իմ խնդիրքս ընդունելով դուրս ելան. Հէնրիադդային գրկին վրայ կը ննջեր մանկիկը, իւր մօրը ծիծերուն պըլուած. . . մօտեցայ Հէնրիադդային. եւ հարցուցի թէ զիս կը ճանչնայ մի. նա իւր աչքերը իմ վրաս դարցուց եւ գլխու թեթեւ շարժումով մը զիս ճանչնալն յայտնեց. Հէնրիադդա, ըսի իրեն, դու առջեւդ մարդ մը կը տեսնաս, որ կը սիրեր եւ դեռ կը սիրէ զքեզ. ես եմ այն անձը միայն, որ քու ժպիտիտ չարժանացայ. այլ սակայն՝ քու միմիայն բարեկամդ ես մնացի. եթէ վերջին կամք մը ունիս՝ յայտնէ ինձ, որ կը կատարուի. չը պատասխանեց Հէնրիադդան. սակայն՝ այտերը արեամբ լեցուեցան, եւ իւր գեղեցիկ երեսը վերջին անգամ հրաբուխ ջերմութիւն մը առին. խեղճ, թշուառ աղջիկ. խեղճ դուխ՝ որ պիտի իյնար. խեղճ վեղ՝ որ որքան որ փափուկ, որքան որ ձերմակ, եւ որքան որ շուշանի մը պէս դիւրարէկ, ահագին դանակի մը հարուածը պիտի ընդուներ. ո՛հ, եթէ Հէնրիադդան մի անգամ ինձ ժպիտ մը շնորհած եւ իմս լիներ, մինչեւ կենացս վախճանը զինքը պիտի

պաշտպանէի, զինքը՝ որ աշխարհիս Թագուհի մը ըլլալու չափ գեղեցիութիւնը ուներ :

« Հէնրիադդա, ըսի իրեն, ճշմարիտ է որ դուն պիտի մեռնիս . քանի որ դեռահաս եւ գեղեցիկ էիր, դու կրնայիր իմ ամուսինս լինել եւ երջանիկ ու պատուաւոր կեանք մը անցընել . եւ այն ատենը պիտի մեռնէիր՝ երբ Թոռներդ զքեզ շրջապատած լինէին . քանի մը ժամ մնաց Հէնրիադդա՛ . եւ ես պարտիմ վերջին հրաժեշտ տալ քեզ . յաւիտենակա՛ն հրաժեշտս » :

Հէնրիադդան դեռ լուռ էր, նա կը սեղմեր իւր զաւակը կուրծքին . չէր պատասխաներ՝ սակայն կուլար . ասոնք առաջին արցունքներն էին, որ ես իրեն աչքերէն հոսելն տեսայ . որոնք՝ այտերէն վար գլտորելով զաւկին վրայ կը Թափէին :

« Այս զաւակը ինձ յանձնէ, ըսի, Թող նա իմն լինի » . Այս խօսքին վրայ խեղճ կիրնը անգամ մըն ալ սեղմելով իւր զաւակը կուրծքին՝ դողդողալով ինձ երկնցուց զայն . սակայն դուռը բացուելով մարդ մը ներս մտաւ « ատ տղան իմն է » պօռալով . այս մարդը բանտապանն էր . հրեշտակիտ եւ սադայելադէմ բանտապանը « ես իմ զաւկիս համար եկած եմ » ըսաւ նա « ոչ ոք իրաւունք ունի նորա վերայ, եկուր Հէնրի » ըսելով Հէնրիադդայի մօտեցաւ եւ տղան քաշեց նորա դրկէն՝ որն որ մեծ դժուարութեամբ

Թողուց իւր եղկելի եւ կիսամեռ մօրը կուրծքը •
 Հէնրխադդան գրեթէ մարեցաւ • որուն կը-
 րած այս վերջին կսկիծը ստիպեց զիս զայն իմ
 բազկայոս մէջ առնուլ • եւ կարելի եղածին չափ
 մխիթարական խօսքեր ընել նորա • վերջապէս
 սթափեցաւ Հէնրխադդան, եւ դողդոջուն ձայ-
 նիւ մը սկըսաւ խօսիլ, « ո՛հ, ապերջանիկ կին
 մեն՛մ ես եւ յանցաւեր • ի՞նչ էր այն նշանը, որ
 դուն միշտ ինձ կուտայիր • ի՞նչ սոսկալի անուն
 էր այն, որ ամեն անգամ զիս տեսնելուդ ա-
 կանջներուս կը հնջեցընէիր • Կարլօթ, կըսէիր
 դու • Կարլօթ՝ որ կը նշանակէ իմ մանկութիւ-
 նըս, իմ պատանէ կութիւնս եւ իմ կուսական
 անմեղութիւնս • Կարլօթ, կը նշանակէ նաեւ
 իմ հօրս առաքինութիւնը եւ մօրս մաղթանքը •
 ապերջանիկ կին մին եմ ես • ունայնասիրութիւնս
 էր որ զիս կործանեց • երբ դուն ինձ հանգի-
 պեցար, դեռ անմեղ էի եւ Կարլօթի վրայ հեծած
 վախցայ քեզնէ, եւ հպարտութեանս պատճա-
 ռաւ ատեցի զքեզ • իմ ունայնասիրութիւնս
 առաջնորդեց ինձ այն ամեն զապրագործու-
 թեանց, որոնց մէջ զիս տեսար, եւ հալածե-
 յիր Կարլօթի անուամբը • դու ինձի բարի խը-
 րատներ տուիր • սակայն ես քու խրատներդ
 մերժեցի • եւ Կարլօթի յիշատակը մոռնալու
 համար որոշեցի հարուստ պատուաւոր եւ զօ-
 րաւոր լինել • բայց Կարլօթի յիշատակը հետա-

մուտ եղաւ իմ ամեն ուրախութիւններս թու-
 նաւորելու, եւ իմ բոլոր յաղթանակներս խայ-
 տառակելու. քու ներկայութիւնդ, ձայնդ, նայ-
 ուածքդ զիս վախճուցին. վասն զի միշտ Կար-
 լօթը կը յիշէիր. որն որ եթէ չը յիշէիր, քանի
 քանի անգամ ես ինքզինքս քու բազկացդ մէջ
 պիտի նետէի ու ըսէի — ո՛հ կը սիրեմ, զքեզ,
 փոխարինէ՛ իմ սէրս. ներէ՛ ինձ, ներէ՛ ինձ — եւ
 աւելցուց — ներէ ինձ Կարլօթի անուանը հա-
 մար, զթա իմ վրաս որ կորսուած եւ յանձանքս
 ներու մէջ ընկղմած եղեռնագործ կին մնեմ ես.
 ո՛հ Պարոն, Քրիստոնէական զթութեան սիրուն
 համար ըլլայ, գրկէ զիս — այս խօսքերը ըսելով
 բացաւ նա իւր բազուկները եւ ես առաջին ու
 վերջին անգամ զգացի նորա այտերուն ջերմու-
 թիւնը իմ այտերուս վրայ.

Դուռը բացուեցաւ, հրամայուեցայ հեռա-
 նալ . . . վազեցի, ձեղքեցի անցայ այն բազմու-
 թիւնը, որ կսպասէր Հէնրիադդայի գլխատուի-
 լը տեսնելու, որն որ նոյն օրը կատարուեցաւ.

Եթէ երբէք կար էակ մը ընդհանուր տիե-
 ղերքին մէջ, Սմենաբարիին անսպառ օրհնու-
 թիւններով լեցուն աշխարհիս մէջ եւ անոնց
 ամենէն զուրկ մնացող յաւիտենական խաւա-
 րով ծածկեալ թշուառութեանց վիհերուն մէջ,
 որ նոյն օրը տեսնելով Հէնրիադդայի գլխատուի-

ը, արտասուած չէր շարժած, կրսեմ թէ այն էակը Աստուծմէ չէ ստեղծուած, Կերդնում եւ այնպէս կը հաւատամ, որ ինչպէս երկինքի հրեշտակները, նոյնպէս ալ տարտարոսին ճիւղները ինձ հետ նոյն օրը անմխիթար սգոյ մէջ թաղուեցան. առաքինի չէր մեռնողը, այլ սակայն առաքինութիւնը մերժող երկրի մը զաւակն էր այն.

Այս աշխարհի մէջ ինչպէս առաքինին՝ նոյնպէս ալ բոլորովին առաքինութենէ զուրկ եղողը մի եւ նոյն թշուառութեան ենթակայ կը լինին, գոնէ առաքինին հանդարտ կը մեռնի, ուրեմն առաքինութենէ խորշող այն թշուառին վրայ ողբալու է, որ աշխարհի համեմատ կեանք մը վարելէն վերջը, իւր մատաղ հասակին մէջ իւր գարնանային գեղեցկութեանը մէջ կը գլխաստուի ու կը թաղուի.

Երկրին արտօնութեանը համաձայն բարեկամիս մէկուն օժանդակութեամբը ծախուածի, եւ մինչդէռ Փարիզ քաղաքը անգթաբար խեղճ Հէնրիադդան ինձ յանձնելէն վերջը իւր գիշերային հանդէսներուն, զուարճութեանցը, պարերուն եւ զաղտնիքներուն կը պատրաստուէր, ես ալ կը պատրաստուէի իմ անկենդան ստացուածքս հողին յանձնել. ո՛ր ես գու, իմ խեղճ Հէնրիադդաս, ո՛ր գնաց, ոչ թէ հոգիդ, այլ գեղեցկութիւնդ. ո՛ր կը փայ-

լե քու վերջին ժպիտդ , խեղճ աղջիկ . այս վայրկեանէս անդին ինչպէս գեղեցկութիւնդ նոյնպէս ալ զաղբագործութիւններդ վերջացած են . ո՛չ ոք ալ կը յիշէ դքեզ , մինչեւ անգամ նոքա , որ քու սիրոյդ համար ամեն բան զոհել կը խոստանային , անոնցմէ մէկն ալ քու ահունդ չի տար . մինչեւ անգամ չեն ըսեր , թէ Հէնրիադդան գլխատուեցաւ . այլ կը դառնան ուրիշ անմեղներ մոլորեցընելու , եւ անգթաբար . քեզ նման մահուան գիրկը նետելու . ո՛հ Հէնրիադդա . ինչո՞ւ համար այսպէս մեռնելիդ դու՝ ինչո՞ւ համար քու գեղեցկութիւնդ , աղքատութիւնդ եւ տկարութիւնդ քու մահուանդ պատճառ լինէին . մեռա՛ր դու , քեզ եղծող քաղաքին օրէնքովը . մեռա՛ր դու , վասն զի արիւնէդ ՚ի դատ ուրիշ բան մը չունէիր տալու այն վատահամբաւ քաղաքին , որ քու անմեղութիւնդ եւ գեղեցկութիւնդ կողոպտեց , մեռա՛ր դու . որո՞ւ համար , որո՞ւ ձեռքով . . . Մարդասէ՛ր երկինք :

Գիշերը կը տիրապետէր , եւ ես ծնկան վըրայ Հէնրիադդայի մնացորդը ամփոփուած գերեզմանին քով ինկած էի . կուզէի աղօթել , բայց անկարող էի , սիրտս կը վնասէի , չէի գտներ զայն . կուզէի հեռանալ , չէի կրնար . . . ընդունէ՛ վերջին հրաժեշտա Հէնրիադդա՛ , իմ փափուկ եւ անմեղ սիրոյս առարկան :

Չեմ գիտեր ինչ կատաղութեամբ վերջա-
ցրեմ իմ պատմութիւնս . ըստ որում, բժշկա-
կան դպրոցի կողմանէ գողցուած էր Հէնրի-
ադդայիս մարմինը . մարդախոշոշ բժշկաց դա-
սը իրենց հմտութիւնը աւելցնելու համար
կարօտ մնացեր էին խեղճ աղջկան մը դիակին .
անօթի գազաններն անգամ առանց սարսռելու
չեն կարող մեռեալի մը հանգիստը եղծել :

Այս վերջին ամբարշտութիւնը զիս կատա-
ղի կսկըծանաց ենթակայ ըրաւ . Հէնրիադդայի
եւ ո՛չ մէկ մասնիկը ա՛լ կարող էի տեսնել . Հէն-
րիադդայի, որոյ կենաց ամեն վայրկեանները
տեսած էի, որոյ վերայ բացարձակ իրաւունք
ուների, ո՛հ, գոնէ գերեզմանի որդերէն կրնայի
պահանջել զայն, բայց ի՞նչպէս կրնայի յուսալ,
որ դիակակարօտ բժիշկներու դանակները զայն
ինձ յանձնէին :

Վերջացուցի՛ անօգուտ աղօթքներս, եւ
կսկիծներս սրտիս մէ՛ջ ամփոփեցի . աչացս ար-
տասուքները առաւօտեան զեփիւռոփէ ցամքե-
ցան . փունջ մը ծաղիկներ ցրուեցի այն հողին
վրայ, ուսկից իմ Հէնրիադդաս գողցուած էր :

Արդարեւ, ամենաթշուառ արարած մըն եմ
որ յոյսն հողիէս, արտասուքն աչքերէս, եւ
ծաղիկները իմ ձեռքէս խոյս տուին . եւ ես մը-
նացի մխիթարութիւն գտնել, ըրած կորուստս
աշխարհի յայանելով :

Վ Ր Ի Պ Ս Կ Ք


| ԵՐԵՍ | ՏՈՂ | ՍԻԱԼ | ՈՒՂԻՂ |
|------|-----|------------|------------|
| 15 | 16 | անցորդներ | անցորդներ |
| 52 | 11 | անտուկներ | ստնտուկներ |
| 40 | 25 | լիովին | զինովին |
| 40 | 25 | ջղալից | զսպեց |
| 48 | 26 | տեսնենելէն | տեսնելէն |



Դիւան
Արեւիկ Ալպոյանեանքի
Դանքիք — Մարտիտ

ԲԱՐՈՒՄ

| ԲԱՐՈՒՄ | ԱՐՄ | ԸՆԴ | ՄԱՐՏ |
|----------|----------|-----|------|
| ԳՆԻՐԳՈՒՄ | ԳՆԻՐԳՈՒՄ | 10 | 10 |
| ԳՆԻՐԿՈՒՄ | ԳՆԻՐԿՈՒՄ | 11 | 11 |
| ՃԻՐԿՈՒՄ | ՃԻՐԿՈՒՄ | 12 | 12 |
| ԳՆԻՐԿՈՒՄ | ԳՆԻՐԿՈՒՄ | 13 | 13 |
| ԳՆԻՐԿՈՒՄ | ԳՆԻՐԿՈՒՄ | 14 | 14 |



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0548806

6097

ЦЕНА

466



(a)
JIAN

ARC
P.